ԼՈՅՍ

Կը հրատարակուի Ջուրեֆաբրի եւ Շաբաթ օրերը : Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան : Մէկ թերթը 40 փարայ արծաթ : Նամակ կամ ո եւ է գրութիւն պէտք է ուղղել Աո Յ. Յ. Պարոնեան Կոստանդնուպոլիս, Մէրճան չարշի Իւրեի էֆէնտի խանի տակ Մ. Կ. Սարրաֆեի տպարանը:

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ թիւ 47 1880 ՇԱԲԱԹ 1 ՄԱՐՏ

ՌՈՒՍԻՆԵԱՆ

(Շարունակութիւն և վերջ)

Ռուսինեան աղատօրէն վարվեցաւ այս թղթակցութեամբ ու երբեմն նաև անհնազ վարվեցաւ բառերու հետ. զի երբ մէկ կողմէն նոր բառեր կը չինէր, միւս կողմէն լեզուին բառերը ըստ իւր ճաշակին կը յարդարէր կամ կը փոփոխէր: Ինչպէս Մալերպի համար իրեն համար ալ կրնար ըսվիլ թէ բառերու ու վանկերու բռնաւոր մ'եղած էր: Այլ չը կրնար ըսվիլ թէ այս մասին իրական ծառայութիւն չը մատոյց նա լեզուին: Շատ դեղեցկահնչուն բառեր ունի չինած և քանի դիտական ու գրական բառեր որ չունէինք և որ ունինք այսօր իր չնորհիւ: Մեր լեզուին բնական դեղեցիկ յատկութիւններէն մէկն է, ինչպէս յունարէնին, բառ չինելու համար ընծայած դիւրութիւնը և Ռուսինեան չատ աւելի լեզուին ոգւոյն ու կերթ ճաշակի համեմատ վարուեցաւ, քան մեր Ռուսահայոց դրագէտները որ Եւրոպական բառերով այնքան խառնեցին լճացեալ լեզուն մինչև բաւորովին խորթ լեզու մ'ընել զայն:

Իսկ կանոնաց մասին, ընդհանուր երեւոյթի մէն է լեզուաց համար, որ սովորութիւնը կանոն եղած է, այլ ոչ մտահաճ կանոն մը կրցած է սովորութիւն ըլլալ: Այսպիսի հաւանականութիւն մ'ընդունելու համար պէտք է ուրանալ այն ամեն ազդեցութիւնք, մինչև կլիմային ալ ազդեցութիւնը, որ կը ներգործեն լեզուներու վրա: Եւ մենք դեռ չը գիտենք այն առեն երբ լեզու մը չինելու եղեր էինք այն ազգին որ ըզ գրաբառն իրեն լեզու ունեցած էր, չը գիտենք թէ ինչ է ձանձրութիւնը որ միօրինակութենէ ու միաձեւութենէ յառաջ կուգայ, և բանաւորութեան խիստ աստուածին կը զոհենք դեղեցկութիւնն ու մեծութիւն:

Բարեբախտաբար Ռուսինեան՝ որ քիչ կը կարդար՝ չատ կը դրեր, որով կրցաւ ինքնին

ղդալ իւր չափազանցութիւնքն ու սխալները։ Երկրորդ տիպը Ուղղախօսութեան ղոր կը պատրաստէր և ղոր չը կրցաւ ատարտել՝ իր և մեր քաւութիւնը պիտի ըլլար առաջի Հայկական մատենադրութեան։

Ատոնք են այն երկու աղդային գործերը՝ որոնց միոյն առաջին հեղինակներէն ինչպէս նաև մինչև վերջը աշխատողներէն մէկն եղած է Ռուսինեան և որոնց միւսոյն ինք միայն թելադիրը ու գրեթէ նաև միակ դործադիրը։ Սահմանադրականք շատ են հիմա և շատ են որ Սահմանադրութեան հեղինակութեան պատիւը իրենց կը սեպհականեն. արդարութեան պէտք է ըսել թէ ի սկզբան եղբք էին որ հեղինակեցին ու քարոզեցին զայն՝ իրենց մի միայն խորհրդակից ու քաջալերունենալով, ղոր մին ամենէն աւելի իրաւունք ունէր սիրելու և ղոր կը սիրէին երեքն ալ, Հայրն Օտեան, ու շատ ժամանակ դարձեալ մնացին իրենք քիչերը՝ աղդին մեծ ու զօրաւոր մասին դէմ, մինչև որ երթալով լեզուն եղան, ապա բանակ, և հուսկ ուրեմն աղդն ամբողջ եղաւ սահմանադրական։ Իսկ անոնք որ արհամարհանօք կամ բարկութեամբ նայեցան Ուղղախօսութեան վրա, որ հալածեցին, որ հեղնեցին և որ բանադրեցին իսկ, պարտաւորեցան վերջապէս խոնարհիլ անոր իսկական մտածութեանը առջև որ աղդային յառաջադիմութեան գործիք մը պատրաստել էր՝ Աղդին կենդանի լեզուն կազմակերպելով և խոստովանիլ նաև՝ թէ այդ աշխատութիւնը ոչ բոլորովին անօդուտ և ոչ ալ զուրկ էր ի բարեմասնութեանց, բարեմասնութիւնք՝ ղոր չեն կրնար ազատել թերութիւնք։

Այս երկու մեծ աշխատութիւններէն դատ՝ Ռուսինեան միշտ աշխատած է, աւելի կամ քիչ տարածման չափ հեղինակ։ Իր գլխաւոր հեղինակութիւնքն են 1854 ի և 1872 ի կըրկին Տարեցոյցները, Երեսփոխանական ժողովոյ մէջ ըրած ատենաբանութիւնքը, և աղդային տուրքի վրա դրած ճառը։

Տարեցոյցը՝ Օրացոյցն է բազմապատկեալ. Ռուսինեանին Տարեցոյցները ճոխ ու սիրուն էին, ճոխ գիտելեօք ու սիրուն իրենց ոճով և դրական փոքրիկ հատուածներով. Հնար չ'էր որ Ռուսինեանին պէս նորոգօդ միտք մը Օրացոյցին չը դպչէր. այլ հոս նախամեծար համարեցաւ փոխ առնել Ֆրանսայի մեծ յեղափոխութեան Սահմանադիր ժողովին ղովին վճռած դեղեցիկ նպատակութիւնը, որ քանի տարիներով օրէնք եղաւ, այլ որ չը կրցաւ տոկալ, ինչպէս ամեն բան որ չափազանց դարաւոր սովորութեան մը դէմ կ'ելնէ։

Եթէ Ուղղախօսութիւնն ու Սահմանադրութիւն մէկմէկ եղելութիւններ եղան աղդին մէջ, իրմէն մի առենաբանութիւնը եղելութիւն մը կըլլար Ընդհանուր ժողովին մէջ։ Ոչ միայն կը դրեր զանոնք առաջուց, այլ և կ'երկասիրէր։ Այն առենաբանութեանց մէջ առնելու է՝ մտածութիւնք որ կուռ և հոծ իրարու կը յաջորդեն իրար ընդդրկելով և սերտ օղակներով իրարու շղթայակապ միանալով, և այս խորհրդածութեան զօրութեանը ու տրամաբանական կորովին վին կը համապատասխանէին բառերն ու բացատրութիւնք ղորոնք ա'յնքան կը լմեր կը յղկէր՝ մինչև դոհացներ կատարելութեան հասնելու կիրքը որ ըստ Լամառթինի առասակ մը հիւանդութիւն կը դառնայ աշխուժական ցեղի մատենադրաց, և այսպիսով՝ չարժում ու կեանք տալով իր պարբերութեանց և իւրաքանչիւր պարբերութիւն նոր լոյս մը ցոլացընելով իր մտածութեանց վրա, թոյլ չ'էր տար որ ունկնդրաց ուշադրութիւնը ճապաղի և զայն կ'ամիսիէր մի միայն իր նիւթին ու իր փաստերուն վրա, որոնցմով կը պաշարէր ամենուն միտքը։

Տուրքի խնդրոյն վրա իր ճառը դրելով թերևս առաջին անգամ փորձն առաւ թէ երբեմն տարբերութիւնը մեծ է տեսակին ու գործնականին մէջ։ Նիւթն այնպիսի նիւթ

մըն է որ շատ ժամանակէ ի վեր կը զբաղեցնէ անհատագէտներն ու պետական անձերը։ Թերևս լուծումի այն օրը երբ ա՛լ տուրքի պէտք չըլլայ, երբ կառավարութեանց գործը մի միայն ապահովութիւնն ըլլայ և այն ապահովութեան գինը դան վճարել կամաւ ամենքը, ինչպէս կը վճարեն այսօր ապահովութեան ընկերութեանց։ Ռուսինեան այս օրը իբր թէ եկած համարելով այնպիսի լուծումի մը կը ներկայացնէ որ կը հրճուեցնէ մարդուս միտքը, այլ անտարակոյս չը կրնար խոթել որ և է փորձառութիւն ունեցող մարդ։ Ո՛րչափ կընճիռները, ո՛րչափ դժուարութիւնք, վէճք ու անիրաւութիւնք անհետ կըլլային եթէ կարելի ըլլար որ և է բանի մէջ վստահիլ իւրաքանչիւրին խղճմտանքին. և ահա այս է այն միակ հիմը որուն վրա կառուցած է Ռուսինեան իր լուծման գրութիւնը։

Ա.յլ Ռուսինեան մանաւանդ կը դերազանցէր թարգմանութեան մէջ։ Ոչ ոք իրմէ աւելի դիտէր թափանցել հեղինակին հոգին և այն հոգւով թարգմանել, չը հեռանալով նաև նիւթական հիւսուածքէն պարբերութեանց։ Իր վ. Հիւկոյի աւետարանութեանց թարգմանութիւնը անհերքելի վկայութիւն մըն է մեր ըսածին։ Նոյնպէս է նաև Էմէ-Մաոլէնի Մարդ գաստիարակութեան թարգմանութիւնը, այն պատուական գրքին զոր կը վստահաբէի որ միակ իմաստասիրական գիրքըն ըլլար որ կարդացած ըլլայի։ Դողար են ու լի ճաշակով իր ոտանաւոր թարգմանութիւնքն ալ որոնց կարգը պէտք չէ դասել Ռիւ Պլասի քիչ մը խժալուր թարգմանութիւնը, ուր յամեն տող երևին իր ճգունքն որոնցմով է՝ երբեմն որ յաղթած է մեծամեծ դժուարութեանց։

Զը դիտեմ թէ բան մը կը պակսի՞ արդեօք այս ոտանաւորներուն մէջ։ բանաստեղծութեան մէջ ճաշակ ըսելով հերի՞ք է հասկընալ ինչ որ միայն ականջին կը հնչէ. հապա՞ ինչ որ մտքին ու սրտին մէջ կը հնչէ՝ ... շատ անգամ բառ մըն է անի, շեշտ մըն է որ կանոնի տողերուն վրայէն և այն բառը, այն շեշտը, այն շունչը ի զուր կը փնտռէ մարդ երբեմն ճարտարագոյն թարգմանութեանց մէջ անդամ, և յետ զարմանալու թարգմանչին արուեստին ու գործածած լեզուին ճոխութեանը կամ փափկութեանը վրա, անհամբերութեամբ կը դիմէ բնագրին՝ հոն գտնելու համար այն ինքնաթափալ լոյսը որ ղինքն ալ աղղէ և ինքիրմէն ծնօղ աւիւնը որ զաւիւն սրտին զարթուցանէ ի մոխրոց եւ ղհոգին հափշտէ ... ։

Եւ արդ Լոսօեցայ Ռուսինեանին աղդային ու գրական կենսագրը վրա. իր հոգին կը ներէ ինձի եթէ երբեմն խոստութեամբ դատեցի, զի դիտէ նա հիմա՝ թէ խաղալիկք ու ոչընչութիւնք են ամեն բան այս աշխարհիս վրա։ Հետևեալ դիրքը իր վերջին գործն է, իր դաղիերէն դասերն են որ կը խօսէր բժշկական դպրոցին մէջ և ղորս ի մի հատածքեց իր վերջին օրերուն։ Զարաչար աշխատութիւնը իր մահուանը պատճառ եղաւ. երբ աշխատութիւն մը կը սկսէր ա՛լ դիշեր ցերեկ անով կը պարապէր ու շատ անգամ քնանալը կը մոռնար։ Իր ամուսինը, Թշուա՛ռ ամուսինը, որ կը տեսնէր այդ մահու չափ աշխատութեան գործած աւերմունքը և կենաց դիւթին տակաւ առ տակաւ սպառիլը, ղինքը կը զգուշացնէր ամեն օր չափազանցութենէ, ինք դա՛ր ձալ կը չարունակէր — եւ իրաւցընէ ուրիշ կերպով չէր ապրեր — և անհուն ձանձրութիւնը ու յուսահատութիւնը կը պատեին ըզնա — երբ չ'աշխատեր —։ Վերջապէս օրին մէկը եկաւ կարդաց ինձի իր այս գործը որ աւարտեր էր, նոյն օրը ամուսնոյն ալ աւետիս էր տուեր թէ «Լըմընցուցի գործս և ա՛լ պիտի հանգստանամ» և թէ «Օտեանին ալ կարդացի, շատ հաւնե-

ցաւ»։ Խե՛ղճ բարեկամ, այն առաջին անդամն էր որ ղինքը կը խորէի, ղի մտիկ չըրի երբ կարդայ ինք մէկ ծայրէն միւս ծայրը իր տետրակները. ոչ եւս կուզէի կարդալ կամ լսել որ և է խմաստասիրական գրուածին. և այսօր ալ որ այս տողերս կը գրեմ իբր յառաջաբան, և որք են մանաւանդ՝ մեր երկուքին կենացը իբրև վերջաբան, դարձեալ չեմ կարդացած զայն։ — Մարդիկ կան որ անդունդէն վար չեն կրնար նայիլ։ Բան մը չգիտենք մենք և չը պիտի գիտնանք, բայց եթէ քնազդով ու ներքին յայտնութեամբ։ — Ոչինչ է խորհրդածութիւնը։ Գուշէն՝ որ թերևս առաջնորդ եղած է Ռուսինեանին այս աշխատութեանը մէջ, իրաւամբ ըսած է թէ խորհրդածութիւնը գործիք մըն է որ միօրինակ կը ծառայէ ճշմարտութեան ու մոլորութեան։ Յոսկալի է ինձի համար մտածել թէ այդ գործիքով պէտք է չանամ թափանցել կենաց գաղանիքը ու գանել յաւիտենական ճշմարտութիւնը։ Ա՛յն տարտամ լոյսը որ յայտնի չէ ո՛ւսոտի կուգայ և ի՛նչ է և որ ըզ հոգիս կ՛ողողէ մերթ ընդ մերթ, իմ միակ մխիթարութիւնս է։ Թո՛ղ առնեն մարդիկ ինէ ամեն բան, միայն գաղտնութիւնս ալ, այլ թողո՛ւն այս մխիթարութիւնը։

Եւ ահա՛ ասոր համար մտիկ չ՛ըրի այն օրը ինչ որ կարդաց ինձի։ Հետևեալ օրը մեռաւ ինք ու հիմա պայծառ ևս կը տեսնէ ինչ որ կընշմարէր իր այն գրուածին մէջ, գեղեցիկը, բարին ու ճշմարիտը։ Մեռաւ ու չարաշուք հոլերը փըչեցին անկէ ի վեր՝ նաև իր բարեկամին զոր պիտի կոչեր՝ կենդանութեան վերջին կայծերուն վրա։ Եւ ամուսինն ալ կողկողագին՝ դեռ կը հեծէ անարձագանգ իր հայրենեաց մէկ գիւղին մէջ՝ ուր չեն հասնիր իրեն իր հազուագիւտ բարեկամայ մխիթարութիւնքն ու ձայնը։

Ա՛յսպէս ահա վաղ թէ անագան վերջանայ կեանք ամենուն, զի պէտք է իրի նայուը, ու բոյն ալ չընչասպառ ըլլայ ու երիտասած թռչնի ծագիկն ըսած բանաստեղծին. և մարդս վայրկեան մը որ կայծ կըլլայ, ապա մխիր յաւիտեան. . . ։

Տարտղնեցա՛ւ այն բոյնը ուր իմ առաջին զգացումներս ու առաջին մտածութիւններս ղարգացան. իմ սրտիս ու միտքիս ընկերներուն չատը մեռան. Պարտիզպան, Գալեան, Ռուսինեան, Աղաթօն, Բարունակ, Պէշիքթաշլեան, կատէ զոր հօր պէս պիտի սիրէի եթէ հայրերուն պատուականագոյնը պարգևած չըլլար ինձի երկինք։ — Մէկ երկու բարեկամ միայն մնացին այն օրերէն, պատուականներ, որ դեռ կը սիրեն զիս և զորս պահէ՛ր ինձ Աստուած մինչև վերջին օրս. ու մէկ քանի ալ նորագոյն բարեկամներ, որք Բարունակին տակի սիրտն ունին, կամ Պէշիքթաշլեանին գաղար ու վախուկ զգայմունքը կամ Նիկողոս Գալեանին յարգանքութիւնը։ Եւ ի՞նչ ուրիշ բան կայ որ արժանի ըլլայ բարիք ըսելու քան բարեկամութիւնը։ Ի՞նչ, այլ թէ միայն Թպիան անմեղութեան, գգուանք մանկան սիրեցելոյ, որ մեր յոտին աւուրց չունին է զեփիւռն, որ գծագրանց յոր երբեմն հպեցան ձեռք մեր՝ ածէ մեզ բոյրն ու թայր, և զերկնից՝ յոր մտաչիք՝ բանայ տեսլի մեր զարեսարան. մանո՛ւկ՝ որ զառկայծեալ խանդին մեր արծարծէ ի մեզ բոյն իւզաստպառ.

Մանուկ որ սէրտ է համբոյր, է՛նա երկինք և տպաւէն.
Եւ Աստուած է շունչնորա ու է յայնոյա խոսնէ Աւ.
Ծոպկուն՝ ամեն գաղտերուն՝ ընդունի՝ ամեն անուրց։

Եւ այդ մանուկ գիս դեռ կոչէ այն անուամբ զոր ուսոյց իրեն Ռուսինեան և այսպէս իւր ձայնին գգուանք խառնելով ի սէրն իմ որ առնա՝ ամեն ժամ և ամեն րոպէ յուշ ածէ ինձ բարեկամն իմ որ ոչ ևս է։

Ու երբ հալին՝ ուրիշ նոր երկայն կամ կարճ, տարիներ, առ անարատ բաղմեալ մահճիս օրհասական իմ ցաւոց, իսկ՛ թէ, նա՛

լինքն, ըստ մարմանագդ ա՛վ Լամառթին, իմ հուսկ բարևս ընդուներ ու քրտինքս ալ սրբեր, ոդի՛ քաղցրիկ, ըզմահն աչքես քաղարկեր՝ գԱստուած միայն ցուցընե՛ր . . . .

1879 Մայիս Գ. Ս. ՕՏԵԱՆ

ԲԱՌԵՐՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ի՞նչ է համաձայնութիւնը։

— Ըստ քերականից է երկրորդ մասն վերականութեան, ըստ դիւանագիտաց՝ շահուց միացումն և ըստ դիւաց, միաբանութիւն ի կորուստ մարդկան։

Ի՞նչ է իրաւունքը։

— Հղօրին պատգամը, սուրին սահմանն և զօրաւորագունին շահը։

Ի՞նչ է շահը։

— Ըստ Անգղիոյ՝ Հնդկաստանի ճանբան և Կիպրոս կղզին, ըստ Ռուսիոյ՝ Բլեւոռնէչ պաշտպանութիւնը (Սլաւներու համար), ըստ Աւստրօ-Հունկարիոյ՝ Հերսեկն ու Պոսնան և ըստ Հայոց՝ անապատ և յաւիտենական յոյսը (ո՛ր յուսով մեղանչէ անյոյս կոլնչի)։

Ի՞նչ է բարենորոգումը։

— Մինչ ի նոր անօրէնութիւն՝ է անուն ամսական։

Ի՞նչ է հարստահարութիւնը։

— Է անուն դոյական, որոյ առեակը չատ ըլլալուն համար միշտ յոդնակի կը գործածուի և իբրև խնդրառու՝ Հայերն իրեն խնդիր կուզէ (սոր ալ պատճառը սասակ հայասէր ըլլալն է)։

Ի՞նչ է պատիժը։

— Ծանցաւորութեան պատուհասը. Հայոց պատուհասն ալ հարստահարութիւնն է, ուսկից այն աստեն պիտի աղատուին Հայք, երբ իրենց յանցաւորութիւնը քաւեն։

Ի՞նչ է խոստումը։

— Դիւանագիտաց անսպառելի դրամագլուխը։

Ի՞նչ է ձեռաց չփումը։

— Դիւանագիտաց յայտնութեան արտաքին նշանը։

Ի՞նչ է ճարպիկութիւնը։

— Պատրանքը, խաբէութիւնը, մեքենայութիւնը, սուտը, որք դիւանագիտաց ճարտարութեան փառքն են։

Ի՞նչ է Հայուն յուսոյ խարխսը։

— Դիւանագիտաց խոստումը։

Ի՞նչ է թեթեւութիւնը։

— Ծանրութեան հակառակը, որ միշտ կը հաւատայ, և երբէք չչահիր. ուստի այսպիսի նիւթապաշտութեան դարու մը մէջ առանց հաւատի շահուց անդրադարձութեան՝ պարզութիւնն անքաւելի յանցանք է։

Ի՞նչ է մեր ազգային քաղաքականութեան առանցքը։

— Բէ՜հ, այդ ալ հարցնելու բան է, չդիտե՞ս որ աճուրդի հանուած է։ Հինգ ամսեայ առուզինն է։

Ի՞նչ է մեր ազգային վարչութեան նշանաբանը։

— . . . Փոխնիին նայելով վարչութիւնը կորսուեր է եղեր և դանողին երկաթուղեայ վիճակահանութեան մեծ պարգևը պիտի տրուի ի վարձատրութիւն։

Ի՞նչ է Հայկական խնդրոյն վախճանը։

— Ցուտա՛, ապատէ՛ և տե՛ս (երանի՛ որոյ ոչ իցէ տեսեալ և հաւատասցէ)։

Ի՞նչ է Տիգրանակերտի խնդրոյն չարժառիթը.

— Ըստ նորա դերասանաց յայտարարութեան՝ ազգային շահուց վտանգումը, բայց ըստ ճշգրիտ քննութեան՝ նորա դերասանաց դաշնի մանուածոյ շահը։

Ի՞նչ է սահմանադրական իրաւանց բռնաբարումը։

— Տիգրանակերտի խնդիրը։

Ի՞նչ է սոյն լրատուից բռնաբարիչներու նշանաբանը։

— Դեղին, խնդրոյն և պարագային համեմատ գոյնը փոխուելուն հդիւ չդիտցուիր, միայն թէ դերասանները միշտ նոյն են։

Ի՞նչ է ուրեմն սահմանադրական լրատուները։

— Բառ մը, որու սահմանն ըստ հաճոյից կը տրուի, վտանգի ամէն տեղի և ամէնուն համար չէ, այլ ճարպիկներու միակ մէնաչնարհն է, որմէ ամէն տեսակ ուխտի դացողը մաս մը կը շահի. իսկ չդացողը վրայ կուտայ, ինչպէս որ վրայ տուին Տիգրանակերտցիք և Քար-բերդցիք։

Ե՞րբ կը բացուի մեր Ազգային Ժողովը։

— Երբոր դոցուի։

Ե՞րբ կը դոցուի.

— Երբ՝ օդերը սաստիկ ցուրտ կամ տաք ըլլան, երբ հիւանդանոցը կամ ընկերութիւնք պարտհանդէս տան և երբ Ազգային Ժողովոյ մասային վրայ Տիգրանակերտի խընդիր կենայ։

Լֆենտիները ե՞րբ ժողովի կուդան։

— Երբ Մխիթար փաշան Պատրիարքարան դայ, կամ պատրիարքական և զինուորական ուխտման և հարստահարութեան խնդիր կենայ։

ԴԻՏՈՂ

ԳԱՏՐԻԼ

Անցեալ գիշեր սոսոէի մը մէջ զանուեցայ, ուր խուռն բազմութիւն մը լեցուէր էր, ամէն մարդ իւր ունեցածը կարծես ցուցնել կուզէր, աղջիկները իրենց գլուխները, կիները դէմքին և ուխտուն տարեկան խոխոռնէրն ալ ֆօ. ընտնին։ Նուագածոյք սկսան հնչեցնել այն դասրիլի եղանակը՝ որ կարծես պարողի մը սիրտը կը թնդացնէ, պարողներու խումբ մը շարուեցան սենեակին մէջտեղ ամենայն կարգապահութեամբ, կարգապահ գինուորներու պէս։

Պարը սկսաւ։

Ատենմէ մէկը կարդ ապետ ընտրուեցաւ իւր ընկերներէն և սկսաւ պօռալ այսպէս.

— Շենանկէս։

— Ուխտուն տարեկան կին մը՝ որ սենեկին մէկ անկիւնը նստած էր սա պատասխանը տուաւ բարձր ձայնիւ։

— Քա Ազատնի նահկէս կըսէ չէ՞ս իմանար։

— Զէ մայր իմ, անհոգ եղիք գասրիլի մէջի անունները կուտայ կոր։

— Տըժ շենանկէս։

— Քա իշտէ սէմինճէքլան նահկէս կը պօռայ կոր։

— Ոտքդ պագնեմ մայր իմ, ձայնդ մի հաներ խաղք ու խայտառակ պիտի ըլլանք։

— Քա ինչ ըսի քի խոյբէթ պիտի ըլլամ. թէնպէլ շուն, թէվէլբէվլի չէ քի տունը մնացիր, չավչափուխ նահկիլէն պերես նէ չ'ըլլար՝ իշտէ վարի րաֆն է։

— Պալանէ։

Նայէ նահկիլէն պապայինսէ կըսէ կոր։

— Ո՛հ, հիմայ պիտի մարիմ, մայր իմ կաղաչեմ ձայնդ կարէ։

— Հիմայ քեզի իրաւ կը մարեցնեմ հա՛... չավուխ սա նահկիլէն վեր բեր, ղերբէ պապայինս է կըսէ կոր՝ անիկայ աղէկ գիտեմ քի պալօնտաուհս էր։

— Դէ՛ր պը դն։

— Ազատնի քա աղջիկ, իշտէ պերես նէ չաբխայիդ թիւյ կը դնեմ կոչ կոր, ղայբր ղէնահաթը չաբխաճի է։

— Մայր իմ գիս պիտի մեռցնես. անիծեալ ըլլայ այն րօպէն որ քենէ ծներ եմ։

— Ինչ ըսիր... ինչ ըսիր... ախօղ... չեմ խօսիր կոր հա, հիմայ թէքմէյիս տակը կառնեմ, քա չ'հաւնեցար ինծի... սըվոր նայէ, քէստանէտէն չըգմըշ քաղու-

խընա պէյհէմէյօր . . . ամմա օղօրմած հո. դիս հալար անգամ ըսի քի՝ տրպատուն չըխրկենք , եառքը մեզի չ՚հաւնիր ատյի , նայէ ըսածըս եկաւ ելաւ , սև օր սև սահաթէ ե. ղեր քի քեզի տրպատուններնք խրկեր :

— Ա՛հ, ատուած իմ գթած՝ իմ վրաս կամ կեանքս կարճցուր :

— Ի՞նչը պիտի կարճեցնես քա՝ ֆիսատ. նը՞գ . . . տիւնեայեն գրուչը գնայ , հէմ ատհա քանի՞ օր է չնեղը :

— Շէն գը գա՛ :

— Շամտան . . . հապա հալար անգամ ըսի քի աս իրիկուն կաղերը մի վառէք , ղա. զա մը կելլէ ատյի , որի կըսես , եկուր տէ հասկցուր . . . աֆէրիմ զաւակըս, լնտոր ալ կիտցար , չամտան եա , չափուխ Ալլահի չամ. տանը :

— Կը լնդրեմ մայր իմ լռէ . . . կա. զաչեմ . . . :

— Քա ես ի՞նչ կընեմ կոր , վա՛յ կըլ. խուդ . . . պան մը ըրած ունիմ :

— Կալօք :

— Իմացա՞ր , անկաճդ վար անցնի . . աս տունին աղչիկը պիտի ըլլաս հէ . . . տահա չամտանին ուր ըլլալը չ՚իյտես կոր , նայէ քենէ աղէկ կիտէ կոր՝ ֆէօին խալիպին քով նէ վարի բաֆը , առջի պահերը փիւ. թիւն վերցընել տուիր , նայէ լնտոր պէտքը կըլլայ եղեր :

— Ալ չեմ կրնար համբերել , բարկու. թիւնս այսպէս կրնամ զսպել :

— Ո՛ւյ . . . երկու աչքըդ քէօրնայ կըսմըտթեցնիր հա՛ . . . ծառուըներդ քաշ. ուի տէ կըսընծի . . . չ՚հասնէիր մէծնալու :

— Լռէ՛ . . . լռէ՛ . . . ձայնդ մի բարձրացընես :

— Տիօղ , զայեր իմ ծառուներս բան. ճար թօփլամիշ կընէ կոր հա՛ . . . քիւթ . . . բաթ . . . քիւթ . . . :

— Ալ ուրիշ բան չեմ կրնար ընել մի. միայն այսչափը :

— Վա՛յ . . . քէօրնաս . . . ճըղիկ ճը. ղիկ կոտրտիս խածիր հա՛ . . . ման թիւս ման թիւս . . . հասէք կըտակ կայ , եանկըն վար :

Նոյն գիշեր գատրիլը նուագարանով ըս. կըսաւ, սակայն ի՞նչ մեղքս պահեմ՝ կըսմըտե. լով խածնելով վերջացաւ :

ԿԱՅԾԱԿ

Ա Զ Դ

Ազգային Հիւանդանոցի սեպհական կալ. ուածներէն եէմի–գուլէի դուրսը Մ. Ծակո. բայ վանքին քով գտնուած սրճարանը, նոյն. պէս ազգային Հիւանդանոցի դէմի հասարա. կաց պարտիզին սրճարանը և պագալիէն վարձու պիտի տրուին . ո՛վ որ կուզէ վարձել, ներկայ Թուականէս մինչև տասն և հինգ օր Զագմագճըլար եօդուշու Մեծ–Նոր խան մէջ Նայարկ 49 թիւ գրասենեակը թող հրամայէ, հարկ եղած օրինական պայմանաց վրայ խօ. սակցելու համար :

Գործակալ Ազգ . Հիւանդանոցի

27 փետր. 1880 Մ. Մ. Հէսուլեան

Յ· Յ· ՊԱՐՈՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՋՈՋԵՐ

Ա.

Լոյսի մէջ հրատարակեալ այլ և այլ ան. ձանց կենսագրութեանցը հաւաքածուն է սա, Գալաֆեան տպարանէն ելած , մաքուր տը. պագրութեամբ 160 երեսով :

Կեդրոնատեղին է Ղուկասեան գրատունը նաև կը գտնուի Լուսոյ գրասենեակը և ամեն գրավաճառաց քով, և սուճի Պօղոս աղայի խանութը, գին կէս արծաթ մէճիտ :

ՍԱՄՈՒԷԼ ՄԱՅԼՍ

ԻՆՔՆՕԳՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՆԿԱՐԱԳԻՐ ՎԱՐՄՈՒՆՔ

ԵՒ

ՅԱՌԱՏԻՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՄԲ

Թարգմանեց Յ. Տ. Ալիշանեցի

Ծանօթութեամբ և. Յաւելուածով

Ս. ԷՄՄԷՋԵԱՆ

Երկրորդ տպագրութիւն

Այս գրքին առաջին տպագրութիւնը շատոնց սպառած ըլլալով երկրորդ անգամ տպուած է սրբագրուած և փոքր ինչ յաւելեալ։ Գիրքը կը բաղկանայ 568 ութածալ երեսներէ և կազմուած է. գինն է 12 ղուրուշ արծաթ. կը գտնուի ամեն գրավաճառաց քով. բայց կեդրոնատեղին է Եչնի-ճամին Ղուկասեան գրատունը։

Տառէն ուելի օրինակներ առնողներուն 0/0 10 զեղչ կ'ըլլայ այդ տեղը։ Նոյն թարգմանչին Աւետիքեան-ին ալ կը գտնուի միևնոյն գրավաճառաց քով։ Գին 5 ղուրուշ արծաթ։

ՅԻՊՆՈՏԻԿՈՆ

ՍԻՊԵՐԻԱԿԱՆԻ ՄԸ

Այն գիրքը որ Մամուրեան էֆէնտիի մէկ նոր թարգմանութիւնն է. իմիրէն հատած ըլլալով կը ծախուի Ս. Ղուկասեան գրատունը, եչնի ճամի չիլինկիրլեր ճատտէսի թիւ 2։

Գին 2 ֆրանք։

Ա. ԱՋԱՏՏԱՔՈՂԵԱՆ

ՓԻԼԻՍՓԱՅԱԿԱՆ ԲԱՒԱՐԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

(ՓՈՐՁ)

ՆԱԽԱՐԱՐ

Տեառ ընդ

կը ծախուի բոլոր հայ գրավաճառաց քով։ Գին մէկ դահեկան արծաթ։

ԵՐԿՈՒ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ա. ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆ ԵԻ ԳՈՒԹ

Բ. ԳԵՂԵՑԻԿՆ ԵԻ ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Ի ՌՈՒՍԵՐԷՆ ՅԱՅՆԵՑԱԾ

Սոյն 90 երեսէ բաղկացեալ մատենիկին մէջ Աւետեան պերճէի հեղինակն իբր բանաստեղծ՝ գողտրիկ լեզուաւ և իբր դաստիարակ հետախոյզ ոգւով կը բացատրէ և կը հաստատէ Գրոց և Գեղեցիկ դպացումներուն ազդին մէջ զարգացման պէտքն։

Կեդրոնատեղին է Կ. Պոլիս, Եչնի-ճամի Չիլինկիրլեր ճատտէսի, թիւ 2. Ս. Ղուկասեան դրատունը, կը գտնուի նաև ուրիշ գրավաճառաց քով։ Գին 5 ղրշ. արծաթ։

ՆՈՐՍԳՔ ՀԱՅԿԱԿԱՆՔ

ՏԵՏՐ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵՑ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

Ա. Շրջան, *Թիւ 6 եւ 7.*

Բովանդակութիւն

Ինձ համար չէ. — Իմ հայրենիք. — Մայրենի լեզու. — Գիւղական աղջիկ։

Մէկ թիւը 2 ղուրուշ մէճիտ։

Մէկ շրջան 24 թիւ 2 մէճիտ։

Ա Զ Գ

Լայը ձեռքէ ծախուելէ զատ նաև կը գտնուի հետեւեալ տեղերը։

Պահճէ-գապու Սուճի Պօղոս աղային խանութը։

Եչնի-ճամի ճատտէսի Ղուկասեանի Գրատունը։

Մահմուտ-փաշայի գլուխ թիւ 239, եփրեմ աղա Փափազեանի Գրատունը։

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Հ. Վ. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ — Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ — Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐՔԵԱՆ

Կ. Պոլիս. Մէրճան Չարչի Բիւշտի էֆ. խանի տակ Թիւ 20.